ԱՀԱԶԱՆԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

“ԱՐ-ՄՈԲԻԼ” ՓԲԸ

ԵՎ

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ” ՊՄ

ՄԻՋԵՎ

99711/00/1

ք. Երևան

"ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ" ՊՄ-ն ի դեմս՝ գլխավոր քարտուղար Աղվան Հարությունյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ "Պատվիրատու") մի կողմից, և "ԱՐ-ՄՈԲԻԼ" ՓԲԸ-ն, ի դեմս՝ գործադիր տնօրեն Երվանդ Այվազյանի, որը գործում է 07.01.2025թ.-ին տրված թիվ 25-0107-Ա հրամանի հիման վրա (այսուհետ՝ "Կատարող") մյուս կողմից, այսուհետ երկուսը միասին՝ "Կողմեր", կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Տագնապ՝

1.1.1 Պահպանվող Օբյեկտից ահազանգման համակարգի ազդանշանը Կատարողի համապատասխան բաժնում ստանալը:

1.2 Կեղծ Տագնապներ՝

1.2.1 Ահազանգման համակարգի տեխնիկական թերության պատճառով ահազանգեր, Պատվիրատուի և/կամ նրա աշխատակիցների թույլտված սխալներ, անզգուշություններ:

1.3 Օբյեկտի անվտանգությանը վտանգ սպառնացող իրավիճակ՝

1.3.1 Օբյեկտ ներխուժման փորձ, դռների, պատուհանների կոտրված կամ բաց լինել և այլ նմանատիպ իրավիճակներ:

1.4 Միջադեպեր՝

1.4.1 Այնպիսի ողջամիտ հանգամանքներ, որոնք սույն պայմանագով սահմանված ծառայությունն մատուցելիս կհայտնաբերվեն և որոշակի վտանգ կներկայացնեն սույն պայմանագրով սահմանված պատվիրատուի գույքի անվտանգության ապահովմանը:

1.5 Ֆիզիկական պահպանության միջոցով հսկողություն՝

1.5.1 Պահպանվող օբյեկտի մոտ նշանակվում է պահպանության ծառայություն պահնորդի միջոցով, մինչև պատվիրատուի լիազորված անձի մոտենալը պահպանվող օբյեկտին:

2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրում նշված պայմաններով և կարգով մատուցել ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրանց դիմաց:

3 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԱՅԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1 Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրին կից Հավելված 1-ում նշված հասցե/ներ/ի (այսուհետ՝ Օբյեկտ) պահպանության ծառայությունն իրականացնել տեղադրված ահազանգման համակարգի միջոցով՝ սույն պայմանագրով, կից հավելվածով սահմանված կարգով և պայմաններին համապատասխան:

3.2 Օբյեկտի պահպանություն ասելով, սույն պայմանագրի իմաստով հասկանում ենք՝ Օբյեկտում առկա ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների (այսուհետ՝ Գույք) պահպանությունը:

3.3 Կատարողը պարտավորվում է իրականացնել Օբյեկտի պահպանությունը հետևյալ եղանակով.

3.3.1 ՀՀ Երևան քաղաքի տարածքում. Տագնապ լինելու դեպքում, Կատարողը պարտավոր է հնարավորինս արագ իր Պահնորդներից բաղկացած արագ արձագանքման խումբ (այսուհետ՝ խումբ) ուղարկել Օբյեկտ, ի դեպ խմբի կազմում ընդգրկված պահնորդների թիվը պետք է բաղկացած լինի առնվազն 2 (երկու) անձից:

3.3.2 ՀՀ Երևան քաղաքից բացի, սույն պայմանագրով սահմանված այլ վայրերում. Տագնապ լինելու դեպքում, Կատարողը պարտավոր է հնարավորինս արագ իր կողմից նշանակված պատասխանատու անձին ուղարկել Օբյեկտ:

3.4 Պատվիրատուն երաշխավորում է, որ պահպանվող տարածքը (Օբյեկտը) իր կողմից օգտագործվում է (նաև պահպանության է հանձնվում) օրենքով սահմանված լիազորությունների առկայությամբ (սեփականության իրավունք, վարձակալություն, անհատույց օգտագործում և այլն) և պարտավորվում է այդ իրավասությունների փոփոխման (նաև դադարման մասին) նախօրոք և պատշաճ կարգով տեղեկացնել Կատարողին: Կատարողը բացարձակ ոչ մի պատասխանատվություն չի կրի սույն պայմանագրով ստանձնած իր որևէ պարտավորության (դրանք չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու) համար, եթե հայտնվի պահպանվող տարածքի և/կամ Օբյեկտի այլ օրինական տիրապետող (օգտագործող և այլն, և/կամ նրանց կողմից լիազորված անձ) և որևէ տեսակի առարկություն կներկայացնի կատարողի կողմից ծառայության մատուցման կապակցությամբ: Նման խնդիր առաջանալու դեպքում Կատարողն իրավունք ունի առանց Պատվիրատուին ծանուցելու, անմիջապես դադարեցնել սույն պայմանագրով սահմանված ծառայության մատուցումը և/կամ միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Պատվիրատուն անմիջապես չվերացնի խնդիր/ներ/ը և/կամ հնարավոր չլինի տեղեկացնել Պատվիրատուին առաջացած խնդրի մասին:

4 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Պատվիրատուն, յուրաքանչյուր 1 (մեկ) Օբյեկտի (Յուրաքանչյուր հասցեում գտնվող 1 (մեկ) մասնաճյուղի) համար վճարում է Կատարողին

ամսական վճար, որի չափը /յուրաքանչյուր 1 (մեկ) Օբյեկտի (յուրաքանչյուր հասցեում գտնվող 1 (մեկ) մասնաճյուղի)/ սահմանված է սույն Պայմանագրին կից Հավելված 1-ում:

4.2 Սույն պայմանագրով սահմանված դեպքերում ֆիզիկական պահպանության միջոցով հսկողություն նշանակելիս Պատվիրատուն յուրաքանչյուր 1 (մեկ) պահնորդի մինչև 12 (տասներկու) ժամ ծառայության համար պետք է Կատարողին վճարի 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ գումարած ԱԱՀ: Ամսական հարկային հաշիվը կարտացոլի համապատասխան փոփոխությունը:

4.3 Յուրաքանչյուր ամսվա վճարումը Պատվիրատուն պետք է կատարի տվյալ ամսի մինչև 10-ն ընկած ժամանակահատվածում, իսկ ամսվա վերջում ծառայությունը մատուցվելու արդյունքում Կատարողը Պատվիրատուին կներկայացնի հարկային հաշիվ:

4.4 Եթե հաշվետու ժամանակահատվածում (որն է՝ ամեն ամսվա 01-ից մինչև տվյալ ամսվա ավարտը) սույն պայմանագրով սահմանված ծառայության և վճարման ենթակա գումարի վերաբերյալ առկա է որևէ առարկություն (դիտողություն, պահանջ և այլն), ապա Պատվիրատուն պարտավոր է հարկային հաշիվը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվանից ոչ ուշ Կատարողին գրավոր կարգով և համապատասխան հիմնավորումներով ուղարկել նման առարկություն/ներ/ը: Նշված ժամանակահատվածում Պատվիրատուի կողմից Կատարողին առարկություն (դիտողություն, պահանջ և այլն) չներկայացնելը դիտարկվում է Պատվիրատուի կողմից առարկություն/ներ/ի բացակայություն: Նշված ժամկետից հետո ներկայացրած առարկություն/ներ/ը Կատարողի կողմից չեն ընդունվում, բավարարման (քննարկման) ենթակա չեն, ծառայությունը համարվում է պատշաճ կերպով մատուցված և առանց առարկություն/ներ/ի ընդունված Պատվիրատուի կողմից:

4.5 Պատվիրատուի կողմից ստանձնած վճարում/ներ/ի պարտավորություն/ներ/ը չկատարելու և(կամ) ոչ պատշաճ կատարելու, պարտքեր կուտակելու դեպքում կատարված վճարումներն առաջին հերթին ուղղվելու են (առկայության դեպքում) վճարման ենթակա տուժանք/ներ/ի, տոկոսադրույք/ներ/ի, վնաս/ներ/ի (և այլն) մարմանը, երկրորդ հերթին նախկինից գոյացած պարտավորությունների մարմանը, վերջում միայն ընթացիկ պարտավորությունների մարմանը: Յուրաքանչյուր հերթի պարտավորության ամբողջական կատարումից հետո նոր սկսվում է մարվել հաջորդ հերթի պարտավորությունը:

4.6 Պատվիրատուն պարտավոր է ժամանակին և պատշաճ կարգով վճարել սույն պայմանագրով նշված բոլոր վճարները:

5 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Կատարողն իրավունք ունի՝

5.1.1 Պահանջել Պատվիրատուից ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ Օբյեկտի պահպանությունը պատշաճ ձևով կատարելու համար:

5.1.2 Օբյեկտի ամբողջականության խախտման նշանների իր կողմից հայտնաբերման դեպքում, պահանջել Պատվիրատուից ներկայանալ այնտեղ՝ ի հայտ եկած թերությունները պարզելու և դրանք վերացնելու համար:

5.1.3 1 (մեկ) օրվա ընթացքում՝ Օբյեկտի պահպանության հանձնված ժամերին 3 (երեք) և ավել Կեղծ Տագնապներ (ահազանգման համակարգի տեխնիկական թերություն, Պատվիրատուի և/կամ նրա աշխատակիցների թույլտված սխալներ, անզգուշություն և այլն) լինելու և/կամ Կատարողի կողմից պահպանվող Օբյեկտի անվտանգությանը վտանգ սպառնացող իրավիճակ նկատելու դեպքում անմիջապես տեղեկացնել Պատվիրատուին և/կամ նրա լիազորված անձին, ինչպես նաև նշանակել ֆիզիկական պահպանության միջոցով հսկողություն սույն պայմանագրով սահմանված ծառայության մատուցման հասցե/ներ/ում, եթե պատվիրատուն անմիջապես միջոցներ չձեռնարկի նշված խնդիրները կարգավորելու համար:

5.1.4 Պատվիրատուին և/կամ լիազորված անձին 5.1.3 կետում նշված խնդիրների մասին տեղեկացնելն անհնար լինելու դեպքում իր նախաձեռնությամբ սահմանված վայրում նշանակել ֆիզիկական պահպանության միջոցով հսկողություն:

5.1.5 Պահպանվող Օբյեկտում իր միջոցների հաշվին տեղադրել ահազանգման համակարգ (Ցանկը տես՝ կից Հավելված/ներ/), որը սակայն, սեփականության իրավունքով պատկանելու է Կատարողին:

5.2 Կատարողը պարտավոր է՝

5.2.1 Կազմակերպել և ապահովել Օբյեկտի, ինչպես նաև գույքի պահպանությունը՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով:

5.2.2 Գողությամբ կամ հանրորեն վտանգավոր այլ արարքով Պատվիրատուին պատճառած նյութական վնասի չափը որոշելու համար մասնակցել Գույքի հաշվարկմանը:

5.2.3 Միջադեպի դեպքում Պատվիրատուին (անհրաժեշտության դեպքում նաև ոստիկանությանը) անմիջապես հայտնել վտանգի (պատահարի) մասին:

5.2.4 Իր նախաձեռնությամբ 5.1.4 կետում նշված կարգով ֆիզիկական պահպանության միջոցով հսկողություն նշանակելիս առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել Պատվիրատուին:

5.2.5 Պահպանել իրեն հայտնի դարձած Պատվիրատուի ծառայողական, բանկային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները, չհրապարակել կամ այլ կերպ երրորդ անձանց համար հնարավորություն չստեղծել ծանոթանալու դրանց (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի):

5.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

5.3.1 Պահանջել Կատարողից կազմակերպել և ապահովել Օբյեկտի և գույքի պահպանությունը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով:

5.3.2 Պահանջել Կատարողից կանխելու Օբյեկտի, գույքի կամ դրա մի մասի անօրինական կերպով դուրսբերումը:

5.4 Պատվիրատուն պարտավոր է՝

5.4.1 Օբյեկտը ամեն անգամ հանձնել պահպանության հետևյալ կարգով՝ փակել Օբյեկտի բոլոր արտաքին պատուհանները, արտաքին դռները, ստուգել, որ ներսում մարդ չլինի, միացնել տագնապի համակարգը:

5.4.2 Առանց Կատարողի հետ գրավոր համաձայնեցնելու չփոխել Կողմերի կողմից՝ ահազանգման համակարգում մուտքագրված այն հեռախոսահամարը, որից Կատարողը ստանալու է տագնապ ազդանշանը:

5.4.3 Կատարողին (լիազորված անձին/անց/) նախապես, իսկ անհնար լինելու դեպքում առավելագույնս սեղմ ժամկետներում, պատշաճ կարգով հայտնել օբյեկտին վերաբերվող տվյալների, հիմնական սահմանված աշխատանքային ժամերի, պահպանման ռեժիմի, գործունեության պրոֆիլի փոփոխման անհրաժեշտության և(կամ) խախտման, դրանց պատճառների, վերանորոգման և վերասարքավորման, այնպիսի միջոցառումների անցկացման մասին, որոնց հետևանքով հնարավոր է օբյեկտի պահպանության բնույթի փոփոխություն:

5.4.4 Միջոցներ ձեռնարկել Օբյեկտի տեխնիկական ամրացվածության վիճակի հետազոտման մասին Կատարողի ակտերում արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:

5.4.5 Կատարողի կողմից Օբյեկտի ամբողջականության խախտման նշանների հայտնաբերման դեպքում նրա պահանջով ներկայանալ այնտեղ՝ ի հայտ եկած թերությունները պարզելու և դրանք վերացնելու համար:

5.4.6 Օբյեկտը Կատարողից ընդունելիս հանցագործության կատարման կամ Օբյեկտի ամբողջականության խախտման կասկած հարուցող հետքերի և նշանների հայտնաբերման դեպքում, դրանց առկայության մասին անմիջապես հայտնել Կատարողին և իրավապահ մարմիններին, իսկ մինչ դրանց ժամանումը թույլ չտալ դեպքի վայրում առկա հետքերի կամ նշանների նկատմամբ երրորդ անձնաց կողմից ցանկացած գործողություն, որը կարող է հանգեցնել դրանց փոփոխմանը, վերացմանը կամ այլ կերպ ոչնչացմանը:

5.4.7 Կատարողի աշխատակիցներին ծանոթացնել անվտանգության այն կանոններին, որոնց պետք է հետևել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամանակ:

5.4.8 5.1.3 կետում նշված խնդիրների առաջանալու դեպքում անմիջապես միջոցներ ձեռնարկել թերությունները կարգավորելու և/կամ Կատարողին վճարել ֆիզիկական պահպանության միջոցով հսկողության համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով, ժամկետ/ներ/ում:

5.4.9 Ապահովել ահազանգման համակարգի անխափան աշխատանքը և Տագնապ ազդանշանի ստացումը Կատարողի համապատասխան բաժին, ինչպես նաև հետևել, որպեսզի չլինեն Կեղծ Տագնապներ.

5.4.9.1 1 (մեկ) ամսվա ընթացքում (հաշվարկվում է յուրաքանչյուր ամսի մեկից մինչև տվյալ ասվա վերջին օրը) մինչև 3 (երեք) Կեղծ Տագնապների դեպքում

Պատվիրատուից գումար չի գանձվում, բացառությամբ 5.1.3 և 5.1.4 կետերում նշված դեպքերի:

5.4.10 Որևէ անհատի և/կամ կազմակերպության հետ կնքել ահազանգման համակարգի տեխնիկական սպասարկման պայմանագիր՝ սույն պայմանագիրը կնքելու օրից մինչև պայմանագրի գործողության ավարտը, և այդ պայմանագրի պատճենը, կնքված Պատվիրատուի կողմից, ներկայացնել Կատարողին:

5.4.11 Իրականացնել ահազանգման համակարգի տեխնիկական սպասարկումը և սարքին վիճակում պահելը իր միջոցների հաշվին:

5.4.12 Չթույլատրել առանց Կատարողի լիազորված անձանց ներկայության Պատվիրատուի և/կամ Կատարողի կողմից տեղադրված ահազանգման համակարգի որևէ փոփոխություն, վերանորոգում և այլն:

5.4.13 Մատուցվող ծառայությունը դադարեցվելիս, Կատարողի պահանջի դեպքում՝ պայմանագրի դադարեցման օրը, ահազանգման համակարգը (Ցանկը տես՝ կից Հավելված/ներ/) սարքին վիճակում (հաշվի առնելով բնականոն մաշվածությունը) վերադարձնել Կատարողին:

5.4.14 Իր կողմից նշանակել պատասխանատու անձ/ինք/, տրամադրել նրա հետ կապ հաստատելու տվյալները (նրա գտնվելու, բնակվելու վայր/եր/ի հասցեն/երը/, հեռախոսի համար/ները/): Պատասխանատու անձը պետք է հասանելի լինի շուրջօրյա և պատշաճ կարգով արձագանքի բոլոր տեսակի հարցերին (խնդիրներին): Պատասխանատու անձի փոխվելու դեպքում նվազագույնը 3 (երեք) աշխատանքային օր առաջ, իսկ անհնար լրնելու դեպքում առավելագույնս սեղմ ժամկետներում, պատշաճ կարգով տեղեկացնել Կատարողին այդ մասին և ներկայացնել նոր պատասխանատու անձին և պահանջվող տվյալները:

5.4.15 Պահպանվող օբյեկտում ոչ աշխատանքային օրերին և ժամերին կանխիկ գումար և/կամ թանկարժեք իրեր չպահել: Եթե հնարավոր չի լինում կատարել սույն պահանջը, ապա ամբողջ կանխիկ գումարը պետք է պահել չհրկիզվող պահարանում, որը պետք է լինի համապատասխան փականով փակված և ամուր ամրացված հատակին կամ պատին:

5.4.16 Վճարել Կատարողին սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում:

6 ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Պահպանության ծառայության իրականացման ժամանակ կատարված զողության կամ հանրորեն վտանգավոր այլ արարքների հետևանքով Պատվիրատուի գույքի հափշտակման, ոչնչացման կամ վնասման դեպքում, Պատվիրատուի և Կատարողի մասնակցությամբ պետք է կազմվի միացյալ հանձնաժողով՝ համատեղ հետաքննություն անցկացնելու և համապատասխան գործողություններ իրականացնելու համար:

7 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Եթե գումարի վճարումը Պատվիրատուի կողմից չի իրականացվում սահմանված ժամկետում, ապա Կատարողը կարող է կիրառել տուժանք՝ չվճարված գումարի 0.1%-ի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար: Սահմանված տուժանքները հաշվարկվում են այնքան ժամանակ մինչև Պատվիրատուն կմարի իր պարտավորությունները ամբողջ ծավալով՝ անկախ պայմանագրի գործունեության դադարելուց և այլ հանգամանքներից, սակայն ոչ ավել քան սահմանված կլինի օրենքով և (կամ) այլ համապատասխան իրավական ակտով, եթե առկա կլինեն նման սահմանափակումներ:

7.2 **Կատարողը պատասխանատվություն չի կրում.**

7.2.1 այն վնասի համար, որն առաջացել է Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի կետերով ստանձնած պարտավորությունները չկատարելու և(կամ) ոչ պատշաճ կերպով կատարելու հետևանքով.

7.2.2 Կատարողին չպատկանող, Կատարողի կողմից չտեղադրված ահազանգման համակարգի (նրա բաղադրիչ մաս հանդիսացող սարք/եր/ի, սարքավորում/ներ/ի, տվիչ/ներ/ի, կապի միջոց/ներ/ի, ենթակառուցվածք/ներ/ի և այլն) խափանման, վնասման և(կամ) Պատվիրատուի գործողությունների, անգործության, պահպանվող օբյեկտը պահպանության չդնելու կամ դնելու անհնարինության, Կատարողի կողմից առաջարկված վճարովի պահնորդական ծառայությունից հրաժարվելու պատճառով առաջացած հետևանք/ներ/ի դեպքում:

7.2.3 Պատվիրատուի (նրա լիազորված անձի/անց/)տվյալների փոփոխման, վերջիններիս հասանելի չլինելու և Պատվիրատուի կողմից Կատարողին նշված հանգամանքների մասին ժամանակին չտեղեկացնելու դեպքում, ահազանգման համակարգ/եր/ի գործարկման հետևանքով երրորդ անձանց պատճառած անհանգստությունների, գանգատների, վնասի համար, ինչպես նաև Պատվիրատուի կողմից Կատարողին տրամադրված պատասխանատուի, ներկայացուցչի լիազորություններ այլևս չունեցող անձանց կողմից գործողությունների և(կամ) անգործության պատճառով առաջացած հետևանքների համար:

7.3 Կատարողը միայն պատասխանատվություն է կրում այն իրական վնասի համար, որը նրա կողմից (անհրաժեշտ պայմանների և հնարավորությունների առկայության դեպքում) անհրաժեշտ պահպանություն չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին:

7.4 Հասցված վնասի չափը որոշելուց հետո Կատարողը Պատվիրատուին հասցված վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է վերականգնի Կողմերի կողմից բանակցությունների արդյունքում համաձայնեցված տրամաբանական ժամկետի ընթացքում:

7.5 Կատարողը իր ընտրությամբ կարող է հասցված վնասի դիմաց փոխհատուցումը կատարել Պատվիրատուին հանձնելով այն գույքի արժեքը, որի

համար պետք է փոխհատուցում կատարել կամ այդ գույքին համանման մեկ ուրիշ գույք տրամադրել Պատվիրատուին:

8 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (Ֆորս-մաժոր)

8.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, բանդիտական կամ ավազակային հարձակումները, հաղորդակցության-կապի միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը կամ ողջամտորեն կողմերի վերահսկողությունից դուրս գտնվող ցանկացած այլ իրադարձություն (իրադրություն), որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.2 Ֆորս-մաժորային իրավիճակի հետևանքով սույն պայմանագրի գործողության դադարեցման դեպքում Պատվիրատուն պարտավորվում է վճարել սույն պայմանագրի դադարեցման պահի դրությամբ փաստացի մատուցված ծառայությունների արժեքը մինչև պայմանագրի լուծումը:

9 ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում “01” Նոյեմբերի 2025թ.-ին և գործում է մինչև “31” Հոկտեմբերի 2026թ.-ը:

9.2 Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց նվազագույնը 15 (տասնհինգ) օր առաջ Կողմերի կողմից դադարեցնելու մասին գրավոր ծանուցում չուղարկելու և պայմանագրային հարաբերությունները փաստացի շարունակելու դեպքում ամեն անգամ Պայմանագրի գործողության ժամկետը կերկարի 1 (մեկ) տարով:

9.3 Պայմանագրի լուծումը Կողմերին չի ազատում Պայմանագրի գործողության ընթացքում իրենց կողմից ստանձնած պարտավորությունների կատարումից:

9.4 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են համարվում Պայմանագրի առարկայի վերաբերյալ Կողմերի միջև նախկինում եղած պայմանավորվածությունները և գրագրությունները:

9.5 Պայմանագրի դրույթները մեկնաբանելիս Կողմերը, ինչպես նաև դատարանը պետք է ելնեն դրանում պարունակվող բառերի և

արտահայտությունների տառացի նշանակությունից: Այդպիսիք պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է Պայմանագրի մյուս պայմանների և Պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

9.6 Պայմանագրի առանձին դրույթի կամ մասի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների կամ մասերի անվավերությանը:

9.7 Սույն պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ:

9.8 Պայմանագրում կատարվող բոլոր փոփոխությունները և լրացումները համարվում են գործող միայն այն դեպքում, երբ ստորագրվել են կողմերի լիազորված անձանց կողմից:

9.9 Հասցեների և/կամ այլ վավերապայմանների փոխվելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել մյուս կողմին համապատասխան փոփոխությունների օրվանից նվազագույնը 10 (տասը) օր առաջ, իսկ նշված ժամկետում հնարավոր չլինելու դեպքում հնարավորինս շուտ.

9.9.1 Եթե կողմերից մեկը չի կատարում նախորդ կետով նշված իր պարտավորությունը, ապա կողմերի կողմից վերջին գրավոր հաստատված համապատասխան փաստաթղթում նշված հասցե/ներ/ով և/կամ այլ վավերապայման/ներ/ով ուղարկված ծանուցում/ներ/ը կհամարվեն պատշաճ ծանուցում այնքան ժամանակ, քանի դեռ, փոփոխություն կատարած կողմը մյուս կողմին գրավոր և պատշաճ կարգով չի տրամադրել կատարված փոփոխությունների մասին հավաստի տեղեկություն:

9.10 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց նվազագույնը՝ 15 (տասնհինգ) օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Կատարողին նրան վճարելով տվյալ ամսվա ընթացքում փաստացի մատուցված ծառայությունների համար:

9.11 Կատարողն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց նվազագույնը՝ 15 (տասնհինգ) օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին:

9.12 Եթե Պատվիրատուն 2 (երկու) և ավել ամիս կամ 2 (երկու) և ավել անգամ չի վճարում և/կամ ուշացնում է սույն պայմանագրով սահմանված ամսական վճարի վճարումը, ապա Կատարողն իրավունք ունի անմիջապես, միակողմանի, առանց Պատվիրատուին ծանուցելու, լուծել պայմանագիրը:

9.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

9.14 Սույն պայմանագիրը և դրա պայմանները գաղտնի են և Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրի գաղտնիության պահպանման համար: Կողմերը իրավունք ունեն երրորդ անձանց բացահայտելու սույն պայմանագրի պայմանները, եթե այդպիսի բացահայտումը պահանջվում է օրենքով կամ անհրաժեշտ է Կողմերի կամ Կողմերից մեկի իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու համար:

9.15 Սույն Պայմանագիրն իր հավելվածներով կազմված է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից մեկը գտնվում է Կատարողի, իսկ մյուսը՝ Պատվիրատուի մոտ:

9.16 Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը ենթակա են կարգավորման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ” ՊՄ	“ԱՐ-ՄՈԲԻԼ” ՓԲԸ
ՀՎՀՀ 08918507	ՀՎՀՀ 01529671
Հաշվառման վայրը՝ Հայաստան, ՎԱՅՈՑ ՁՈՐ, ԵՂԵԳՆԱՁՈՐ, ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ., Շ 5	Հաշվառման վայրը՝ ք. Երևան, Արաբկիր, Ա. Հեքիմյան փողոց 1տ.
Գործունեության վայրը՝ _____, _____	Գործունեության վայրը՝ ք. Երևան, Արաբկիր, Ա. Հեքիմյան փողոց 1տ.
Հեռ.՝ (_____) ___ ___ ___ ___	Հեռ.՝ (+374)–12-81-20-65
ԲԱՆԿ. “_____”_____	ԲԱՆԿ. “Ինեկոբանկ” ՓԲԸ
Հ/Հ. _____	Հ/Հ. 2050922001091002
Պատշաճ ծանուցման էլեկտրոնային փոստը՝ marzpet.vayotsdzor@mta.gov.am; artur.smbatyan@mail.ru	Պատշաճ ծանուցման էլեկտրոնային փոստը՝ info@armobil.am;
Գլխավոր քարտուղար՝ Ա. Հարությունյան	Գործադիր տնօրեն՝ Ե. Այվազյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)

	ՊԱՅՄԱՆԱԳԻՐ **Ահազանգման համակարգի միջոցով պահպանության ծառայությունների մատուցման մասին**	Կոդ Կ /03-Պ-001/ AM	
		S25-55-1/1	31.10.2025թ.
		էջ 12/13	

Հավելված 1

Պահպանվող Օբյեկտների ցանկը, պահպանության ամսաթվերը, յուրաքանչյուր Օբյեկտի համար սահմանված վճարը և այլն.

Հ/Հ	Պահպանվող Օբյեկտի հասցե (Անվանում)	Օբյեկտը պահպանությունից հանված լինելու ընթացքում (ժամ/եր/ին) (Ոտնակի միջոցով)	Օբյեկտը պահպանության հանձնված լինելու ընթացքում (ժամ/եր/ին) (Ահազանգման համակարգի միջոցով)	Պայմանագրի 5.1.5, 5.4.12 և 5.4.14 կետերում սահմանված համակարգեր	4.1 կետով սահմանված վճարը Յուրաքանչյուր Օբյեկտի համար
	Ծառայության մատուցման սկիզբը “01” Նոյեմբերի 2025թ.-ից:				
1.	ՀՀ., Վայոց Ձորի մարզ, Եղեգնաձոր, Շահումյան փող., 5 շենք հասցեում գտնվող “Վայոց Ձորի մարզպետարան”	_____	Օբյեկտի պահպանությունն իրականացվելու է այն պահպանության դնելու պահից (ժամ/եր/ին)՝ ԱՀԱԶԱՆԳՄԱՆ համակարգի միջոցով:	Ցանկը տես կից հավելված __.__	ամսական 41 667 (քառասունմեկ հազար վեց հարյուր վացունյոթ) ՀՀ դրամ՝ գումարած ԱԱՀ:
	Ընդհանուր թվով 1 (մեկ) օբյեկտ (մասնաճյուղ)				**Ընդհանուր ամսական 41 667 (քառասունմեկ հազար վեց հարյուր վացունյոթ) ՀՀ դրամ՝ գումարած ԱԱՀ:**

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ

ԿԱՏԱՐՈՂ
“ԱՐ-ՄՈԲԻԼ” ՓԲԸ

ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ” ՊՄ
Հայաստան, ՎԱՅՈՑ ՁՈՐ, ԵՂԵԳՆԱՁՈՐ,
ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ., Շ 5
Գլխավոր քարտուղար՝ Ա. Հարությունյան

(ստորագրություն)

ք. Երևան, Արաբկիր, Ա. Հեքիմյան փողոց 1տ.

Գործադիր տնօրեն Է. Այվազյան

(ստորագրություն)

ք. Երևան

"Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմ" ՊՄ-ն ի դեմս՝ գլխավոր քարտուղար Աղվան Հարությունյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ "Պատվիրատու") մի կողմից, և "ԱՐ-ՄՈԲԻԼ" ՓԲԸ-ն, ի դեմս՝ գործադիր տնօրեն Երվանդ Այվազյանի, որը գործում է 07.01.2025թ.-ին տրված թիվ 25-0107-Ա հրամանի հիման վրա (այսուհետ՝ "Կատարող") մյուս կողմից, այսուհետ երկուսը միասին՝ "Կողմեր", կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ հաստատում են սույն համաձայնագիրն առ այն, որ, սկսած "31" Հոկտեմբերի 2025թ.-ից.

1.1 Կողմ/եր/ի միջև համաձայնեցված էլեկտրոնային փոստի, ծանուցման հասցեների, առձեռն և/կամ փոստի միջոցով ծանուցումները (նամակագրություն/ներ/ը և այլն) համարվում են **պատշաճ ծանուցում**, ունեն օրինական ուժ և այն ուղարկելուց հետո համարվում է ստացված ստացող Կողմի կողմից:

1.2 Կողմ/եր/ը պարտավորվում են ապահովել համաձայնեցված էլեկտրոնային փոստի, ծանուցման հասցե/ներ/ի գործունակությունը, պատշաճությունը (հաղորդագրությունների ստացումը) և մյուս կողմին անհապաղ (հնարավորինս շուտ) տեղեկացնել փոփոխություն/ներ/ի մասին:

1.3 Էլեկտրոնային փոստի միջոցով գրագրություն իրականացնելու դեպքում ծանուցումը համարվում է պատշաճ՝ անկախ Կողմերի կողմից պատասխան հաղորդագրությամբ էլեկտրոնային փոստի ստացումը հաստատելու հանգամանքի:

1.4 Էլեկտրոնային փոստի և/կամ ծանուցման հասցեն/ներ/ը փոփոխելու կամ դադարեցնելու դեպքում նախապես, հնարավորինս շուտ պետք է ծանուցում ուղարկվի մյուս Կողմին, ինչից հետո նշված փոփոխություն/ներ/ը Կողմերը երկկողմանիորեն հաստատում են իրավասու (լիազորված) անձանց միջոցով: Եթե համապատասխան Կողմը չի կատարում նշված պարտավորություն/ներ/ը, ապա նախկինում համաձայնեցված հասցե/ներ/ին ուղարկված հաղորդագրություն/ներ/ը համարվում են ստացված (պատշաճ ծանուցված):

1.5 Ծանուցման իրականացման համար Կողմերի էլեկտրոնային փոստերը.

1.5.1 "ԱՐ-ՄՈԲԻԼ" ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստ՝ info@armobil.am;

1.5.2 "Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմ" ՊՄ-ի էլեկտրոնային փոստ՝ marzpet.vayotsdzor@mta.gov.am; artur.smbatyan@mail.ru:

1.6 Կատարողը Պատվիրատուին տեղեկացնում է նաև, որ հեռախոսային և(կամ) այլ էլեկտրոնային խոսակցությունները որակի վերահսկողության նկատառումից ելնելով կարող է ձայնագրվել:

2 ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
"Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմ" ՊՄ	"ԱՐ-ՄՈԲԻԼ" ՓԲԸ

	ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ # 1 ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ	Կոդ Կ /03-Պ-001/ AM S25-55-1/1 31.10.2025թ. էջ 2/2

ՀՎՀՀ 08918507	ՀՎՀՀ 01529671
Հաշվառման վայրը՝ Հայաստան, ՎԱՅՈՑ ՁՈՐ, ԵՂԵԳՆԱՁՈՐ, ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ., Շ 5	Հաշվառման վայրը՝ ք. Երևան, Արաբկիր, Ա. Հեքիմյան փողոց 1տ.
Գործունեության վայրը՝ _____, _____	Գործունեության վայրը՝ ք. Երևան, Արաբկիր, Ա. Հեքիմյան փողոց 1տ.
Հեռ.՝ (_____) ___ ___ ___ ___	Հեռ.՝ (+374)–12-81-20-65
ԲԱՆԿ. “_____”_____	ԲԱՆԿ. “Ինեկոբանկ” ՓԲԸ
Հ/Հ. _____	Հ/Հ. 2050922001091002
Պատշաճ ծանուցման էլեկտրոնային փոստը՝ marzpet.vayotsdzor@mta.gov.am; artur.smbatyan@mail.ru	Պատշաճ ծանուցման էլեկտրոնային փոստը՝ info@armobil.am;
Գլխավոր քարտուղար՝ Ա. Հարությունյան	Գործադիր տնօրեն՝ Ե. Այվազյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)